ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03 փետրվարի 2023թ. **ք.Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /այսուհետ՝ դատարան/, նախագահությամբ դատավոր Ալֆրեդ Վարդանյանի, ծանոթանալով <<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերության հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերությունը 2022թ. օգոստոսի 23-ին դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի՝ գնահատող հանձնաժողովի արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին:

Նշված հայցադիմումը մակագրվել և հանձնվել է դատավոր Է.Ամալյանին:

Դատարանի /դատավոր Է.Ամալյան/ 2022թ-ի օգոստոսի 31-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Իսկ, 2022թ. հոկտեմբերի 19-ին, իբրև օրենքով սահմանված եռօրյա ժամկետում թերությունները վերացրած և կրկին ներկայացվող հայցադիմում, վերաբաշխվել և դատավոր Ա.Վարդանյանին է մակագրվել <<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի՝ գնահատող հանձնաժողովի արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը:

Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա.Վարդանյանի աշխատակազմին է հանձնվել 2022թ. նոյեմբերի 07-ին:

Դատարանի 2022թ. նոյեմբերի 09-ի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձվել է:

2022թ-ի նոյեմբերի 21-ին հայցվորի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022թ-ի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և 09.11.2022թ. թիվ ԵԴ/43516/02/22 որոշումը վերացվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանից գործի նյութերը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է ստացվել 2023թ-ի հունվարի 30-ին, իսկ դատավոր Ա.Վարդանյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ-ի հունվարի 31-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանն իրավասու է անդրադառնալ միայն հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերին, որոնց բացակայության դեպքում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ: Տվյալ դեպքում, դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Տվյալ դեպքում, առնվազն հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, առկա չէ գործը գրավոր ընթացակարգով քննելու անհնարինություն, հետևաբար դատարանը գտնում է, որ գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով: Միաժամանակ, գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2023թ. մարտի 20-ին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125 հոդվածով, 127 հոդվածի 6-րդ մասով, 199-200, 201, 234.5-234.9 և 361 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի՝ ՋԿ-ԲՆԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2022թ-ի թիվ 5 և 28.06.2022թ-ի թիվ 6 արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու, և 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2023թ. մարտի 20-ին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ